

## ՄԻՔԱԹԻ ՀՈՒՄԻ ՄԷՋ

Վարչապետի պաշտոնակատար Նեժիպ Միքաթի պաշտոնական այցելությունը ժամանեց Հոմ, ուր պիտի տեսակցի Հոմի Ֆրանչիսկոս պապին հետ: Միքաթի նաեւ պաշտոնական տեսակցություններ պիտի ունենայ իտալացի պաշտոնատարներու հետ:

## ԱՐԶԱՆ ԶԻ ԽՈՒՍԱՓԻՐ ՊԱՔՈՒԻ ԶԵՏ ՇՓՈՒՄԵՆ

Լիբանանի պետությունը, ներկայացուած Արդարադատության նախարարության դատերու խորհուրդի նախագահ դատարար Յելանե Իսքանտարով, անձնական ամբաստանագիր հրապարակեց Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամի, անոր եղբոր՝ Ռաժա Սալամի:



մէի եւ օգնական Մարիան Հոնայեթի նկատմամբ, հիմնուելով Պէյրուսի վերաքննիչ ընդհանուր դատախազութան ամբաստանագրին վրայ՝ կաշառքի, կեղծիքի, դրամի լուսնումի, ապօրինի հարստացումի եւ տուրքեր խուսափումի կասկածներով: Դատարարը նաեւ պահանջեց ամբաստանելները ձերբակալել, կալուածները գրաւել, սառեցնել անոնց ու ընտանեկան պարագաներուն դրամատանային հաշիւները, ապա զանոնք դատել Պէյրուսի դատարանին մէջ եւ ենթարկել խստագոյն պատիժներու, նկատի առնելով ենթադրաբար կատարուած ոճիւններուն վտանգաւորութիւնը:


Լեռնալիբանանի վերաքննիչ ատենախօսքի ընդհանուր դատախազ Դատա Անու ճիշդ համարեց Սալամի նկատմամբ ամբաստանագրի հրապարակումը, նկատի առնելով Լիբանանի եւ արտերկրի մէջ անոր հետապնդումը:



Լիբանանի ելեմտական զուգահեռ շուկային մէջ ամերիկեան տուրքին փոխարժեքը երկէ շարունակեց բարձրանալ եւ գիշերը կը տատանէր 105 հազար լիբանի շուրջ: Միաժամանակ, պենզինի 95 օջախի սակագինը հասաւ 1 միլիոն 852 հազարի, իսկ կազին գինը՝ մէկ միլիոն 248 հազարի:

### ՊԸՐԻ ՄՏԱՅՈՒ Է

Խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրի յոյս յայտնեց, որ խորհրդարանը շուտով կարենայ ընտրել հանրապետութեան նոր նախագահը: «Բոլորէն պահանջուած է իմա-



նալ, որ ժամանակ չենք կրնայ վատնել, նկատի առնելով տնտեսական անկումը, մանաւանդ ի տես ամերիկեան տուրքի փոխարժեքի կտրուկ աճին», ըսաւ Պըրրի Այն Ռիսէի մէջ պատուիրակութիւններ ընդունած ատեն: Ան միաժամանակ ահազանգեց, թէ նախագահական դատարկութիւնը կրնայ շատ երկար տեւել՝ խոչընդոտելով սահմանադրական հաստատութիւններուն հեզասահ աշխատանքը: «Այդ կրնայ աղետալի հետեւանքներ ունենալ երկրին վրայ եւ անկէ պիտի չփրկուի ոեւէ մէկը՝ ներառեալ ընտրական հոլովոյթը խոչընդոտողները», շեշտեց Պըրրի: Խօսելով քաղաքապետական ընտրութիւններուն Պէյրուսը բաժանելու առաջարկներուն, խորհրդարանի նախագահը կտրականապէս մերժեց այդ գաղափարը՝ նշելով, որ Պէյրուսի պառակտումը նաեւ Լիբանանի պառակտումն է: Ան փոխարէնը առաջարկեց մայրաքաղաքին մէջ մահմետական-քրիստոնէայ հաւասարակշռութիւնը պահպանել: Պըրրի դրուատեց Իրանի եւ Սեւուական Արաբիոյ միջեւ կնքուած համաձայնութիւնը եւ վստահութիւն յայտնեց, որ ան դրական ազդեցութիւն պիտի ունենայ Լիբանանի վրայ: Ան միջազգային ընտանիքէն պահանջեց պատասխանատուութիւն կրել Լիբանան ապաստանած սուրիացի գաղթականներու տունդարձի հարցով:

Արցախի Հանրապետութեան Արտաքին գործերու նախարարութիւնը մեկնաբանեց Ատրպէյճանի նախագահի խորհրդական Հիքմէթ Յաճիեւի Նորագոյն յայտարարութիւնները, որոնք կը վերաբերին դարաբաղեան հակամարտութեան, բանակցային հոլովոյթին եւ այլ հարցերու: «Ատրպէյճանական կողմի պնդումները, թէ դարաբաղեան հակամարտութիւնը լուծուած է եւ այլեւս միջազգային օրակարգին վրայ չէ, չեն համապատասխաներ իրականութեան: ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակը համանախագահող երկիրները եւ շեշտած են, որ հակամարտութիւնը տակաւին կարիք ունի լուծումի», յայտարարեց նախարարութիւնը: Հարողողագրութիւնը վերահաստատեց, որ Լաշինի միջանցքը տակաւին կը մնայ շրջափակուած, թէեւ Պաքու կը պնդէ, որ կը թոյլատրէ երթելու միջանցքով:

Իսկ Արցախի Ազգային ժողովի նախագահ Ռթուր թովմասեան շատ կարեւոր համարեց այն, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան իր վերջին յայտարարութիւններուն մէջ առանցքային նպատակ համարեց Արցախի ժողովուրդին իրաւունքներուն եւ անվտանգութեան պահպանումը: «Շատ կարեւոր է, որ Հայաստանի իշխանութիւնները պաշտոնական Պաքուի հետ խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւններուն մէջ չեն պատրաստուիր Արցախի նկատմամբ ցեղային զտում

կամ ցեղասպանութիւն արտօնելու», ըսաւ Թովմասեան: Մեկնաբանելով Արցախի պաշտօնեաները Ատրպէյճանի



հետ բանակցութիւններու հրաւերին մասին խօսքերը, Ազգային ժողովի նախագահը շեշտեց, որ իրենք երբեք չեն խուսափած Պաքուի իշխանութիւններուն հետ շփումներէ:

## ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ ԼՈՒՐՁ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ

«Անոնք որոնք կը խորհին, թէ Իսրայէլի մէջ չենք կրնար հասնիլ քաղաքացիական պատերազմի, ապա իրականութեան մասին նուազագոյն գաղափարն իսկ չունին»: Այս-



պէս յայտնեց Իսրայէլի նախագահը, մեկնաբանելով երկրին մէջ դատական բարեփոխումներուն հարցով ստեղծուած լարուածութիւնը:

Իսրայէլեան բանակը յայտարարեց, թէ Երկուշաբթի օր Հայֆա քաղաքին մօտակայ Մաժնօ շրջանի մուտքին մեծ ական մը պայթեցուցած անձը ներթափանցած էր լիբանանեան հողերէն եւ գործողութիւնը իրականացնելէ ետք վերադարձած էր սահմանային շրջան, կրելով գէւքեր եւ ականուած գօտի մը: Այնտեղ, Լիբանանի հետ սահմանային Ետարա շրջանին մէջ անոր ճանքան խոչընդոտած են իսրայէլացի զինուորները եւ զայն սպաննած: Բանակին, ոստիկանութեան եւ ներքին հետախուզութեան՝ Շապահին հրապարակած միացեալ հարողողագրութիւնը նշեց, որ «նախնական հետաքննութիւնը ցոյց կու տայ, թէ ան քանի մը օր առաջ ներթափանցած է լիբանանեան հողերէն, իսկ այժմ կը կատարուի ընդարձակ հետաքննութիւն՝ պարզելու համար գործողութեան Հրապարակային հաւանական պատասխանատուութիւնը»: Նշեց, որ Երկուշաբթի օր տեղի ունեցած պայթումին հետեւանքով ծանրօրէն վիրաւորուած էր իսրայէլացի մը, իսկ իսրայէլեան իշխանութիւնները մինչեւ երկէ երեկոյեան արգիլած էին միջադէպին մասին տեղեկութիւններու հրապարակումը: Հետաքննիչները կը կարծեն, թէ ականը նման է անցեալին Հրապարակային գործածած այլ ականներու: Վարչապետ Պենիամին Նեթանիահու որոշեց կրճատել իր Պերլին այցելութիւնը եւ վերադառնալ Իսրայէլ՝ հետեւելու համար գարգացումներուն: Իսկ իսրայէլեան բանակի սպայակոյտի պետը կը ուղղեց պատրաստ ըլլալու զանազան ճակատներու վրայ լարուածութեան աճի՝ ներառեալ բախում Իրանի հետ: Իսրայէլեան բանակի սպայակոյտի նախկին պետ գորավար Դատի Այզըթը Զնէյթէն յայտարարեց, որ Իսրայէլ այժմ կը գտնուի 1973-էն ի վեր ապահովական ամենէն վտանգաւոր փուլերէն մէկուն մէջ: Ան նշեց, որ այս գոյնացումը կը կատարէ լիբանանեան ու պաղեստինեան ճակատներուն վրայ տիրող իրաւիճակին ու Իրանի հարցով ընթացող զարգացումներուն հիման վրայ:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Մոսկուայի մէջ հիւրընկալեց իր սուրիացի պաշտօնակից Պաշար Ասատը, որուն հետ քննարկեց Սուրիոյ եւ տարածաշրջանի վիճակը, Մոսկուա-Դամասկոս յարաբերութիւնները: «Մենք ականատես կը դառնանք մեր երկկողմանի յարաբերութիւններու մեծ զարգացումի: Սուրիացիները դժբախտաբար հանդիպած են աղէտի, սակայն մենք, որպէս մտերիմ բարեկամներ, մեր կարելին կ'ընենք մեղմելու այդ դժուարութիւնները», ըսաւ Փութին: Ասատ, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց Ռուսիոյ շարունակական աջակցութեան համար: Խօսելով Ուքրանիոյ պատերազմի մասին, Ասատ դատապարտեց «արեւմտեան նազիներու մղած պատերազմը», շեշտելով որ աշխարհը կարիք ունի հաւասարակշռութեան վերադասարուումի, այլապէս պիտի ուղղուի կործանումի եւ անկումի ուղղութեամբ:

### ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Ամերիկեան Սպիտակ տան մէջ ռազմավարական հաղորդակցութիւնները համակարգող ճոն Զիրպի յայտնեց, որ իրենք գուցէ կարողութիւն չունենան Սեւ ծովէն դուրս բերելու ամերիկեան անօդաչու թռչող սարքը, որ օր մը առաջ խոչընդոտուած է կործանուած էր ռուսական կործանիչի մը հարուածով: «Ուաշինկթընի մէջ Ռուսիոյ դեսպա-



նը տեղեկացուցինք, որ Մոսկուա պետք է աւելի ուշադիր ըլլայ եւ խուսափի լարուածութենէն», ըսաւ Զիրպի: Իսկ Փենթագոն մերժեց պարզել, թէ Ռուսիոյ սահմանէն ոչ-հեռու սաւաննած սարքը գիտնուած էր, թէ ոչ: Նախապէս, Ռուսիոյ նախագահութեան բանբեր Տիլթրի Փեսքով յայտնած էր, որ իրենք նախապէս չեն մերժած, այսօր եւս չեն ընդդիմանար ամերիկացիներուն հետ երկխօսութեան կայացումին: Ան սակայն ժխտեց, որ անօդաչուի հարցով հաղորդակցութիւններ կան ամերիկացիներուն հետ: Իսկ Միացեալ Թագաւորութեան պաշտպանութեան նախարարը, իր կարգին, Մոսկուայէն պահանջեց յարգել միջազգային օդային տարածքի ազատութիւնը:

### ԵՄԵՆԻ ՄԵՋ ՀԱՄԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ



Եմենի հարցով ՄԱԿ-ի միջնորդը հակամարտող կողմերուն կը ուղղեց օգտուելու Իրանի եւ Սեւուական Արաբիոյ

### ՀԱՄԱՇԵԱՐԴԱՅԻՆ ՎԵՐԱԴԱՍԱՒՈՐՈՒՄԻ ԿԱՐԻՔ





## «ԱՏՐՊԷՅՃԱՆԸ ՆՊԱՏԱԿ ԿԸ ՀՆՏԱՊՄՆԻՔ ԱՏԵՂՈՅԷ ԱՆԱՐԳԵԼ ՅԵՂԱՅԻՆ ԶՏՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՄԵՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ԲԱՅԱՌՆԵՐՈՎ ՄԻՋԱԳՎԱՅԻՆ ՀԱՆՐԱՌԹԵԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ» ԱՐՑԱՆԻ ԱԳՆ

Ի պատասխան Ատրպեյճանի նախագահի օգնական, նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության բաժնի պետ Ֆիքմեթ Յահիեի ատրպեյճանա-դարաբաղեան հակամարտության, բանակցային գործընթացի եւ շարք մը այլ հարցերու վերաբերեալ ինչեզուցած միտքերուն՝ Արցախի Արտաքին գործերու նախարարութիւնը անհրաժեշտ համարած է նշել հետեւեալը.



«Ատրպեյճանական կողմի պնդումները, թէ ատրպեյճանա-դարաբաղեան հակամարտութիւնը լուծուած է եւ այլեւս միջազգային օրակարգում չէ, իրականութեանը չեն համապատասխանում: Այն մասին, որ ատրպեյճանա-դարաբաղեան հակամարտութիւնը լուծուած է եւ կարիք ունի համապարփակ կարգաւորման, բազմիցս յայտարարել են ինչպէս առանձին պետութիւններ, այդ թումբ՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահող երկրներ, այնպէս էլ մի շարք միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Փաստը, որ 2022 թ.-ի Դեկտեմբերին ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը, որը կրում է միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան պահպանման հիմնական պատասխանատուութիւնը, քննարկել է Լաչինի միջանցքի շրջափակման հետ կապուած իրավիճակը, հերքում է ատրպեյճանական կողմի պնդումները, թէ հակամարտութեան հարցը դուրս է եկել միջազգային օրակարգից: Արցախի Յանրապետութեան եւ Նրա Ժողովրդի դէմ ուժի ապօրինի կիրառման արդիւնքներն օրինականացնելու եւ այն որպէս ատրպեյճանա-դարաբաղեան հակամարտութեան լուծում ներկայացնելու պաշտօնական Պաքոյի ձգտումը փորձ է վերադառնալու այն ժամանակաշրջան, երբ ռազմական ուժը գերակայում էր միջազգային իրաւունքի նկատմամբ:

Համոզուած ենք, որ հակամարտութեան համապարփակ կարգաւորմանը հնարաւոր է հասնել միայն բանակցութիւններով միջոցով եւ միջազգային իրաւունքի կանոններին ու սկզբունքներին հիման վրայ: Մերժելով պաշտօնական Ատեփանակերտի հետ երկխօսութեան միջազգային մեխանիզմը՝ Ատրպեյճանը փորձում է խուսափել հնարաւոր պայմանաւորութիւններին իրականացումից: Արցախի եւ Ատրպեյճանի միջեւ երկխօսութեան մէջ միջազգային հանրութեան ներգրաւումը միակ ճանապարհն է՝ երաշխաւորելու հակամարտութեան համապարփակ լուծումը:

Արցախեան կողմը կտրականապէս մերժում է Ատրպեյճանի փորձերը՝ խեղաթիւրելու հակամարտութեան էութիւնը եւ այն ներկայացնելու որպէս ներքին խնդիր: Աւելի քան 90 օր տեւող Արցախի շրջափակման լոյսին տակ, ակնյայտ է, որ այդպիսով Ատրպեյճանը նպատակ է հետապնդում Արցախում ստեղծել անարգել ցեղային գտումներ իրականացնելու պայմաններ՝ բացառելով միջազգային հանրութեան միջամտութիւնը: Հէկց այդ պատճառով է Ատրպեյճանը դէմ հանդէս գալիս միջազգային հանրութեան ներգրաւմանը, այդ թումբ՝ միջազգային առաքելութիւններ Արցախ ուղարկելուն, որպէսզի ոչինչ եւ ոչ ոք չկարողանայ խոչընդոտել Արցախի ցեղային գտման ենթարկելու իր յանցարար ծրագրի իրականացմանը:

Միաժամանակ, ատրպեյճանական կողմը շարունակում է կեղծ մեղադրանքներ ինչեզնել առ այն, թէ Հայաստանի ամբողջութեամբ դուրս չի բերել իր զինուած ուժերը եւ շարունակում է զենք ու զինամթերք մատակարարել Արցախ: Նման պնդումները չեն համապատասխանում իրականութեանը եւ նպատակ են հետապնդում՝ արդարացնելու Լաչինի միջանցքի աւելի քան 90 օր շարունակուող արգելափակումը:

Ընդգծենք, որ Արցախի Յանրապետութիւնն ունի Պաշտպանութեան բանակ՝ կազմուած տեղի բնակիչներից, որի առկայութիւնը չի հակասում 2020 թուականի Նոյեմբերի 9-ի ռազմադադարաւորութեան որեւէ դրոյթի եւ հանդիսանում է Արցախի ժողովրդի անվտանգութեան հիմնական երաշխիքը: Արցախի Պաշտպանութեան բանակի դէմ Ատրպեյճանի արշաւը պայմանաւորուած է նրանով, որ Պաքոյն ձգտում է զրկել արցախահայութեանը ինքնապաշտպանութեան եւ ցեղային գտման յանցարար ծրագրերին դիմակայելու հնարաւորութիւնը:

Ատրպեյճանի պնդումները, թէ Լաչինի միջանցքը բաց է՝ կեղծիք են: Նշենք, որ Արդարադատութեան միջազգային դատարանի լուծմանը ընթացքում Ատրպեյճանը հնարաւորութիւն ունի ներկայացնելու իր բոլոր փաստարկները՝ Լաչինի միջանցքի արգելափակման հետ կապուած իրավիճակի վերաբերեալ, սակայն կողմերի փաստարկները մանրամասն ուսումնասիրելուց յետոյ, Արդարադատութեան միջազգային դատարանը պարտաւորեցրեց Ատրպեյճանին երաշխաւորել անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով: Վերստին յիշեցնում ենք, որ Արդարադատութեան միջազգային դատարանի որոշումներն իրաւաբանօրէն պարտադիր են»:

## «ԿԱՅՈՒՆ ԿԱՐԳԱԻՐՄԱՆ ՀԱՍՏԱՐ ԱՆԶՐԱԾԵՆՏ Է ԼՂ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԻՐԱՌԻՆՔՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՎՏԱՆՊՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԱՐԻՐՈՒՄԸ» ԵՆ ԶԵԿՈՅՑ

Եւրոպական խորհրդարանը կողմ քուէարկեց ԵՄ-ՀՀ յարաբերութիւններուն վերաբերեալ բանաձեւին: Բանաձեւին կողմ քուէարկեց 534 պատգամաւոր, դէմ՝ 10, ձեռքնպահ՝ 66: Չեկոյցին մէջ բանաւոր փոփոխութիւններ առաջարկուեցան, մասնաւորապէս՝ դատապարտել Լաչինի միջանցքի շարունակական շրջափակումը, որ կը վատթարացնէ Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական ճգնաժամը, ինչպէս նաեւ դատապարտել ատրպեյճանական կողմին եւ Լեռնային Ղարաբաղի հայերուն միջեւ 5 Մար-



տին տեղի ունեցած միջադէպը, որ յանգեցուց գոհերու՝ վտանգի տակ դնելով խաղաղութեան հաստատման գործընթացը: Բանաւոր փոփոխութիւնները եւս ընդունուեցան:

Եւրոպական խորհրդարանին ներկայացուած զեկոյցին մէջ կը նշուի, որ վերջին 30 տարուան ընթացքին Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը, ինչպէս նաեւ Ատրպեյճանի վերջին ներխուժումը Հայաստանի ինքնիշխան տարածք տասնեակ հազարաւոր տուժածներու, մեծ աւերածութիւններու եւ հարիւր հազարաւոր մարդոց տեղահանման պատճառ դարձած է, սակայն Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը դեռ չէ լուծուած:

Փաստաթուղթին մէջ կը ներկայացուին Ատրպեյճանի յարձակումները Գեղարքունիքի, Սիւնիքի եւ Վայոց ձորի մարզերուն մէջ, Հայաստանի ինքնիշխան տարածքի մէջ մասին բռնագրաւումը Ատրպեյճանի կողմէ, քաղաքացիական ենթակառուցուածքներու գնդակոծութիւնները, հայ ռազմագերիներու եւ այլ պահուող անձերու արտադատական սպանութիւնները, Լաչինի միջանցքով քաղաքացիական երթեւեկութեան արգելափակումը:

Չեկոյցին մէջ կը նշուի, որ Հայաստանի եւ Ատրպեյճանի յարաբերութիւններու կայուն կարգաւորման համար հարկաւոր է դադարեցնել բռնութիւնը, երաշխաւորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան իրաւունքները եւ անվտանգութիւնը:

Փաստաթուղթը ուշադրութիւն կը հրաւիրէ այն բանին, որ Հայաստանը Transparency International հակափտածութեան կեդրոնի ցուցակին մէջ 2016-2021 թուականներուն 16 կէտով բարելաւած է իր դիրքերը, զգալի ժողովրդավարական յառաջընթաց արձանագրած է դրական քայլերու ձեռնարկած է փտածութեան դէմ պայքարին մէջ:

«Դադուանդեմ, 2021 թուականին հակափտածութեան եւ դատական խոստացուած բարեփոխումները դանդաղած են համավարակի եւ Լեռնային Ղարաբաղի նոր հակամարտութեան յառաջացուած քաղաքական եւ տնտեսական ճգնաժամին հետեւանքով», կը նշուի զեկոյցին մէջ:

Չեկոյցին մէջ նաեւ կը նշուի, որ իր հարեւան երկիրներու շարքին Հայաստանը յառաջատար դիրքեր կը գրաւէ Economist Intelligence Unit-ի 2021 թուականի ժողովրդավարութեան ցուցակին եւ «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպութեան՝ 2022 թուականի մամուլի ազատութեան ցուցակին մէջ:

## ԱՐՄԷՆ ԴՈՒՂԱՐԵԱՆՆ ՈՒ ՉԷՅՆԱԿ ՄԻՆԱԿ ԴԻՏԱՐԿԱԾ ԵՆ ՇՐՔՆԵՐՈՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՀԱՅԱՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՅԱՑՄԵՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՐ ԱՆԶՐԱԾԵՆՏ ԵՆՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ԲԱՅՆԻ

Քաղաքաշինութեան կոմիտէի նախագահ Արմէն Դուլարեանը ընդունած է Ֆրանքֆոնի խաղերու միջազգային կոմիտէի տնօրէն Չէյնա Միւսան: Հայրուի առնելով



Հայաստանի հետաքրքրուածութիւնը՝ հիրընկալելու Ֆրանքֆոնի 10-րդ՝ յոբելեական խաղերը 2027 թուականին՝ դիտարկուած են նման մասշտաբային միջոցառումը կայացնելու համար անհրաժեշտ ենթակառուցուածքները: Արմէն Դուլարեանը նշած է, որ շահագրգիռ բոլոր գերատեսչութիւններուն հետ միասին Կոմիտէն նոյնպէս մեծ

## ԵՂԱՅՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԵՀԱԾԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՊԵՏԻՆ ՄԻՋԵՒ

Երեքշաբթի, 14 Մարտ 2023-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոս այցելեց Յունաստանի եկեղեցույ հոգեւոր կեդրոնը, ուր ան ջերմօրէն դիմաւորուեցաւ Աթէնքի եւ համայն Յունաստանի երոնիմոս Բ. արքեպիսկոպոսին կողմէ:



Արքեպիսկոպոսին շուրջ ներկայ էին մետրոպոլիտներ, եպիսկոպոսներ ու քահանայ հայրեր:

Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ անդրադարձաւ հայ եւ յոյն եկեղեցիներուն միջեւ գոյութիւն ունեցող դարաւոր սերտ յարաբերութեան ու գործակցութեան: Ան ըսաւ, որ պատմութեան ընթացքին, պայմաններու բերումով, աստուածաբանական տարբեր մօտեցումներ ու մեկնաբանութիւններ բաժնեցին մեր եկեղեցիները, սակայն հիմնական հարցերու շուրջ մենք որդեգրեցինք յոյն մօտեցումները: Ծարուակելով իր խօսքը՝ Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ այսօր մենք կը գործակցինք մեր հաւաքական արժեքներուն եւ Յեղասպանութեան առնչուած մեր դատին առնչութեամբ: Մեր սերտ գործակցութիւնը չէ սահմանափակուած Յունաստանի սահմաններէն ներս, այլ գոյութիւն ունի ոհն՝ ուր հայ եւ յոյն գաղութներ կան: Հայրապետը, յիշելով անցնող շաբաթներու կան յոյն եկեղեցիներու կողմէ շոգեկառնի արկածը, իր խոր ցաւակցութիւնը յայտնեց երոնիմոս Բ. արքեպիսկոպոսին: Իր խօսքի ամառտին, Վեհափառ Հայրապետը իր ջերմ շնորհակալութիւնը յայտնեց հայ համայնքին նկատմամբ Յոյն եկեղեցույ ցուցաբերած աջակցութեան ու նախանձախնդրութեան համար:



Երոնիմոս արքեպիսկոպոսը, իր կարգին, յատուկ կերպով ողջունեց Վեհափառ Հայրապետին Յունաստան այցելութիւնը: Ան յիշեց Հայրապետին դերը միջեկեղեցական աշխարհին ներս եւ աստուածաբանական երկխօսութեան զարգացման մէջ: Արքեպիսկոպոսը նաեւ անդրադարձաւ Միջին Արեւելքի քրիստոնէայ համայնքներու դիմադրանքին դիմադրութեանը եւ իր գորակցութիւնը յայտնեց շրջանի եկեղեցիներուն: Խօսելով հայ եւ յոյն եկեղեցիներու մասին՝ ան յիշեց, որ պատմական կապերով ամրապնդուած են մեր եկեղեցիներուն գործակցութիւնը: Արքեպիսկոպոսը նաեւ իր գնահատանքը յայտնեց Յունաստանի զարգացման ու յառաջդիմութեան մէջ յունահայութեան բերած դրական մասնակցութեան:

Երկու հոգեւոր պետերու պաշտօնական խօսքերու ամառտին տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

Վեսօրին, ի պատիւ Վեհափառ Հայրապետին, Յունաստանի եկեղեցույ պետը սարքեց ճաշկերոյթ, որուն ներկայ էին Յունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, առաջնորդական փոխանորդ եւ Գոմոթիւնի շրջանի հոգեւոր հովիւ Գերպ. Տ. Յովհաննէս Ծ. Վրդ. Սաղտըճեան, Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջեկեղեցական յարաբերութեան վարիչ Յոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, Թեսալոնիկէի հոգեւոր հովիւ Յոգշ. Տ. Եղիա Արք. Մալխասեան եւ յոյն հոգեւորականներ:

**info**

Միտելի ընթերցող, Տեղական, միջազգային, մշակութային, մարզական եւ այլ լուրեր բջջային հեռաձայնի վրայ հայերէնով ստանալու համար, անմիջապէս ներբեռնէ լիբրարիաներն առաջատար եւ անվճար «INFO 3» յաւելուածը, որ հասանելի է Applestore-ի եւ Playstore-ի միջոցաւ:

Այսպիսով դուն հայերէնով եւ վայրկեանը վայրկեանին պիտի իմանաս օրուան վերջին զարգացումները:



# ԱՐԱՐԱՍ Տնտեսական

## ԼԻԲԱՆՍ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՍԿԻ ԱՆԿՈՒՄ

Լիբանանի դիմագրաւած տնտեսական տագնապը այս շաբթուան սկիզբը հասաւ վտանգաւոր տեղ մը, երբ լիբանանեան ոսկիին փոխարժեքը ԱՄՆ տոլարին դիմաց հասաւ 100 հազար լիբանանեան ոսկիի՝ մէկ տոլարի դիմաց: 2023 տարուան սկիզբէն ի վեր լիբանանեան ոսկին կորսնցնուցած է իր փոխարժեքը 138 առ հարիւր համեմատութեամբ:

2019 տարուան տնտեսական տագնապին սկիզբը, Կեդրոնական դրամատունը ուներ 32,5 միլիարտ տոլարի պահեստ: Անցեալ Գեոքորուարին այդ պահեստը հասաւ 9,7 միլիարտ տոլարի: Այսինքն, Կեդրոնական դրամատան մօտ նուազեցան այն լծակները, որոնց օգտագործումով կըրնար նուազեցնել ճնշումը լիբանանեան ոսկիին վրայ: Դժբախտաբար այդ գումարին փոքր տոկոսը տեղ հասաւ: Մեծ մասը ծախսուեցաւ դրամատուններուն արտաքին պարտավորութիւնները վճարելու եւ կարգ մը առանձնաշնորհեալ անձերու օգտին: Այլուրի, դեղորայքի եւ այլ սնունդի ապահովման համար ծախսուած գումարը մեծ էր ու անկէ մաս մը չհասաւ լիբանանցիներուն, մաքսանենգութեան պատճառով: Դրամազուլուի փոխարժեքն օրէնքը շատոնց պետք է վաւերացուէր, զսպելու համար արտերկիր փոխարժեքը դրամազուլու:

## ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՅԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ

Պահիլէի մէջ տեղի ունեցած Միջխորհրդարանական միութեան 146-րդ համաժողովի ընթացքին Հայաստանի խօսքը արտասանեց Ազգային ժողովի պատգամաւոր Յասմիկ Յակոբեան: Ան յայտնեց, որ խաղաղ գոյակցութիւնը հիմնուած է փոխադարձ յարգանքի, հաւասարութեան եւ փոխշահաւետութեան վրայ ու ոչ թէ թշնամական գործողութիւններու վրայ: Ներկայիս Լեռնային Ղարաբաղը կը ներկայացնէ այն օրինակը, ուր ուժ մը կը փորձէ մղել բնիկները գաղթելու: Ատրպէյճան տարբեր միջոցներ կ'օգտագործէ Արցախը պարպելու համար իր բնիկներէն: 12 Դեկտեմբեր 2022-էն ի վեր Արցախը Հայաստանին կապող Լաչինի միջանցքը փակուած է ատրպէյճանցիներու կողմէ: 120 հազար բնակիչ կը գտնուին մարդասիրական ծանր վիճակի մէջ: Կայ դեղորայքի, սնունդի եւ վառելանիւթի պակաս: Պատգամաւորը ասեց, որ միջազգային ընտանիքին մօտ ներկայիս կայ կայուն ան հասկացողութեան, թէ կատարուածը ցեղային գտումի օրինակ մըն է: Յակոբեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն երկիրներուն եւ կազմակերպութիւններուն, որոնք օժանդակեցին այս հարցին լուծում գտնելու հողովոյթին մէջ:

## ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵ ԵՒ ԱՌԻԿԷ ԿԱՐԵՌԻ ՀԱՍՏԱՅՆՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ ընդդիմադիր վեց կուսակցութիւններ ժողովուրդի Հանրապետական կուսակցութեան (Cumhuriyet Halk Partisi) նախագահ Զեմալ Քիլիչտարօղլուն ընտրեցին նախագահութեան թեկնածու՝ մրցելու համար ներկայ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի դէմ, Մայիս ամսուան ընթացքին կայանալիք նախագահական ընտրութեան: Սակայն, ըստ քաղաքական վերլուծողներու, 74 տարեական տնտեսազեղը չունի այն գրաւչութիւնը, որ պետք է նախագահ ընտրուելու համար: Երկրաշարժը միասնական ազդեցութիւն ձգեց Էրտողանի ժողովրդականութեան վրայ: Մասնագետներ նաեւ այս ընտրութիւնը կը նկատեն վերջին առիթ մը երկիրը փրկելու համար դէպք միայնակութիւն սահելէն: Ընդդիմութիւնը ներկայացուց Դոլսոյ եւ Անգարայի քաղաքապետներու թեկնածութիւնը որպէս փոխնախագահ:

Անցեալ շաբթի մամուլի ամենակարեւոր լուրն էր Զինատանի միջնորդութեամբ համաձայնութեան մը լուրը Իրանի եւ Մեծնական Արաբիոյ միջեւ: Երկու երկիրները 4 օր տեւած բանակցութիւններէ ետք, իրենց Ապահովութեան խորհուրդի քարտուղարներու մակարդակով, հասան համաձայնութեան մը, ըստ որուն, երկու ամսուան ընթացքին պիտի վերակազմուի դիւանագիտական յարաբերութիւնը անոնց միջեւ: Խոստում կայ նաեւ չմիջամտելու իրարու ներքին հարցերուն: Ըստ ԱՄՆ-ի, միջազգային ճնշումը Իրանի վրայ սկսած է տալ իր պտուղները: Այս մէջը առաջին պտուղն է: ԱՄՆ կը փափաքէր, որ Մեծնական Արաբիա դիւանագիտական յարաբերութիւն հաստատէ Իսրայէլի հետ, սակայն պատահեցաւ այլ քայլ մը չլինական միջնորդութեամբ: Այս քայլը փաստեց, որ Զինատան սկսած է մեծ դեր վերցնել միջազգային յարաբերութեան կարգաւորման հողովոյթին մէջ:

## ԵՐՈՊԱ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Ֆրանսայի մէջ կը շարունակուին բողոքի ցոյցերը նախագահ Էմանուէլ Մաքրոնի ներկայացուցած թոշակի բարելավումի ծրագրին դէմ: Սենտիքսներ դէմ կը դնեն այդ փոփոխութեան, ըստ որուն, թոշակի անցնելու տարիքը պիտի դառնայ 64, ներկայի 62-ին փոխարէն: Ըստ նախագահին, այդ բարելավումը անհրաժեշտ է պահելու համար թոշակի ներկայ վիճակը: Հակառակ պարագային, ան կրնայ քանի մը տարիէն սնանկանալ: Ծերակոյտն ալ իր հաւանութիւնը տուաւ այդ բարելավումին: Խորհրդարանի երկու պալատներու ջուրէն առաջ, միացեալ յանձնարարութեամբ մը վերջին քննարկները պիտի կատարէ այդ բարելավումին: Թէեւ բնակչութեան մեծամասնութիւնը դէմ է նախագահ Մաքրոնի ծրագրին, սակայն մեծամասնութիւնը դէմ է նաեւ գործադուլին: Գործադուլը սառեցուց երկիրը եւ աղբի կոյտեր հաւաքուեցան Փարիզի եւ մեծ քաղաքներուն փողոցներուն մէջ: Ելակարգականութիւնը սկսաւ անջատուիլ գործադուլին պատճառով:

Կրաստանի խորհրդարանը դադարեցուց քննարկումը «օտար ոչ-կառավարական կազմակերպութիւններու» օրէնքին, բազմամարդ բողոքի ցոյցերէ ետք: Այս օրէնքը օտար պիտի համարէր բոլոր այն կազմակերպութիւնները կամ լրատուամիջոցները, որոնք օժանդակութիւն կը ստանան օտար կազմակերպութիւններէ եւ այդ օժանդակ-

կութիւնը կը կազմէ իրենց պիւտճէին 20 առ հարիւրէն անէլի: Այսպիսի օրէնք մը կար Ռուսիոյ Դաշնութեան մէջ: Այս փոփոխութեան դէմ դրին երկրի նախագահը եւ ընդդիմադիր արեւմտամետ կուսակցութիւններ: Այս օրէնքը նախատեսուողները թափանցիկութիւնը անցնելու համար կատարեցին այդ քայլը: Այս օտար օժանդակութեան ձեւով է որ Ուքրաինայի մէջ տեղի ունեցաւ 2014-ի յեղափոխութիւնը: Հայաստանի մէջ ալ օտար կազմակերպութիւններ մեծ դրամազուլու կը մտցնեն երկիր՝ Արեւմտեան պատկերը գեղեցկացնելու համար: Երուպական միութիւնն ալ պայման դրած է, որ այսպիսի օտար կազմակերպութիւններ կարենան ազատօրէն գործել իւրաքանչիւր անկող երկրի կամ Միութեան միանալիք թեկնածու երկրին մէջ:

## ԱՄՆ ԱՄՆ-Ի ԿԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Ըստ մասնագետներու, ԱՄՆ-ի կրթական համակարգը կը դիմագրաւէ շարք մը դժուարութիւններ: Գորոն ժահիրի համաճարակի աւարտէն ետք, ուսուցիչներու թիւը սկսաւ անելու: Սակայն, այս ժամանակաշրջանին աշակերտութեան թիւը անկում արձանագրեց: Այս հոլովոյթը շարունակուելու պարագային, շատ մը վարժարաններ կրնան փակուիլ: Երկու պատճառով աշակերտութեան թիւը նուազում կ'արձանագրէ: Առաջինը ԱՄՆ-ի շատ մը շրջաններու մէջ ծնելիւթեան նուազումն է: Իսկ երկրորդ պատճառը դէպի ԱՄՆ ներգաղթողներու թիւի նուազումն է: 2010-էն 2020-ի միջեւ ԱՄՆ-ի դպրոցական տարիքի երեխաներուն թիւը նուազած է մէկ միլիոնով: Նաեւ շատ մը քաղաքներ, որոնք տնտեսական անկում կ'ապրին, ինչպէս Շիքագո եւ Լոս Անճելէսը, ընտանիքներ կը հեռանան անոնցմէ, տեղափոխուելով այլ քաղաքներ:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՎԱՐԿ ԿԱՄՈՒՏԻ ԿՐԱՍԱՏՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱԳՆԱԿԸ

Անցեալ շաբթի ԱՄՆ-ի դրամատնային համակարգը սկսաւ վճարել գինը սղածին, որ երեւցաւ անցեալ տարուան ընթացքին: Սղածին հիմնական պատճառը տոլարի հսկայ ծաւալն էր որ Կեդրոնական դրամատունը մտցուց շուկայ 2008-ի տնտեսական տագնապէն ետք եւ դէմ դնելու համար Գորոնա ժահիրի համաճարակին: Այս հսկայ գումարը պատճառեց սղած (inflation): Դեմ դնելու համար սղածին, դրամատունը սկսաւ բարձրացնել պարտքի տոկոսը: ԱՄՆ-ի շուկային մէջ վաճառուած նոր պարտավորութիւնները (bonds) դարձան անելի շահաբեր: Հին պարտավորութիւնները՝ ցած տոկոսով, դարձան բեռ դրամատուններուն վրայ: Ուրեմն, դրամատունը փորձեցին նոյնիսկ



փորձը վնասով ծախել այս պարտավորութիւնները անելի բարձր տոկոսով նոր պարտավորութիւններ գնելու համար: Այս ծուղակին մէջ է որ իսկաւ «Սիլիքոն Վելի» դրամատունը: Ան վնասով ծախեց պարտավորութիւնները, եւ յաճախորդները վախճալով երկու օրուան մէջ դրամատունէն քաշեցին անելի քան 40 միլիարտ տոլար: Ան յայտարարեց «սնանկացում» ինքզինքը պաշտպանելու համար: Ուրեմն, այն դրամատունը որ ներդրում կը կատարէր սկսնակ համակարգիչներու ծրագրաւորումի ընկերութիւններուն մէջ, դարձաւ գոհը տոկոսի բարձրացումին: Ներկայիս Կեդրոնական դրամատունը կը փորձէ զսպել այս դրամատուններէ փախուստը, անոնցմէ գնելով ինչ, ցած տոկոսով պարտավորութիւնները, չկրնելու համար «Սիլիքոն Վելի» դրամատան սխալը:

Դրամատուններու վիճակը սերտելով եւ ապագայի ուղիւթիւնները քննելով, «Մուտիզ» վարկաւորումի կազմակերպութիւնը ԱՄՆ-ի դրամատուններուն վարկանիշը սահմանեց «ժխտական», նախկին «կայուն» ին փոխարէն: Կազմակերպութիւնը այս որոշումը կայացուց նկատի առնելով դրամատուններու ընդհանուր վիճակը, մասնաւոր տոկոսի յաւելումի պատճառով տնտեսական տագնապի վտանգը եւ կախիկ գումարի պակասը անոնց մօտ: Կեդրոնական դրամատունը, զսպելու համար դրամատուններու տագնապը, կրնայ սառեցնել պարտքի տոկոսի յաւելումը: Այս է պատճառը որ ԱՄՆ տոլարին փոխարժեքը նուազեցաւ անցեալ շաբթի:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ ԹՈՇԱԿԻ ՄՆՏՈՒԿ (Pension funds)

Թոշակի սնտուկը այն դրամական հաշիւն է, որմէ կը վճարուին թոշակի տարիքի հասած մարդոց ամսական վճարումները եւ առողջապահութեան ծախսը: Այս թոշակի հաշիւին կայունութիւնը կախեալ է երկու կարեւոր գործոնէ: Առաջին գործոնն է այս հաշիւին եկամուտը: Տարիներու ընթացքին պաշտօնատէր վճարած տուրքերը կը հաւաքուին հաշիւի մը մէջ, որ կը դրուի եկամուտ ապահովող ներդրումներուն մէջ: Այս ներդրումը պետք է ապահովէ ամսական որոշ եկամուտ, թոշակի հաշիւին հաւասարակշռութիւնը պահելու համար: Վերջին տարիներուն, մասնաւոր 2008 թուականի համաշխարհային տնտեսական տագնապէն ետք, այս եկամուտը նուազեցաւ եւ այս սնտուկը ստիպուեցաւ վճարումներ կատարել

մայր դրամազուլուին, որ երկար ժամանակի ընթացքին կրնայ սնանկանալ: Երկրորդ գործոնն է երիտասարդ սերունդի միանալը այս սնտուկին: Վերջին տարիներուն, մասնաւոր Արեւմուտքի մէջ ցած ծնելիւթեան պատճառով այս սնտուկին միացող երիտասարդ սերունդի անդամներուն թիւը սկսաւ նուազիլ: Ուրեմն, թոշակի տարիքի հասած սնտուկին անդամներուն թիւը երբ անելի ըլլայ եկամուտ ապահովող երիտասարդ սերունդի անդամներէն, այդ պարագային ալ սնտուկին ապագան կը դառնայ մութ: Արեւմուտքը ներկայիս կը դիմագրաւէ այս երկու գործոնները եւ այդ է պատճառը որ Ֆրանսայի նախագահը կ'ուզէ թոշակի տարիքը բարձրացնել 64-ի, ներկայի 62-ին փոխարէն, եկամուտ ապահովելով սնտուկը պահելու համար:

## Վ. ԹՈՒՄԵՆՍ

## ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ ԼՈՒՐՁ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ

(Շարունակուած Ա. Էջէն)

Միջեւ կնքուած համաձայնութեան եւ յստակ քայլերու ձեռնարկելու՝ խաղաղութեան ուղղութեամբ շարժելու համար: «Այժմ կը նկատուի տարածաշրջանային դիւանագիտական աշխուժութիւն եւ պետք է օգտուիլ ընտելած հնարաւորութենէ»՝ անէլ խաղաղ ապագայ մը ունենալու համար», ըսաւ ան:

Իսկ Մեծնական Արաբիոյ ելեմուտքի նախարար Մոհամմատ ժատան յայտնեց, որ Իրանի մէջ սեւտական ներդրումներու ան կրնայ նկատուիլ շուտով, նկատի առնելով յարաբերութիւններու բնականոնացումի համաձայնութիւնը՝ յանուն տարածաշրջանային խաղաղութեան:



Իրանի ծովումը մինչ այդ յայտարարեց, թէ միացեալ ռազմափորձեր սկսած է կատարել Ռուսիոյ եւ Զինատանի հետ՝ Հնդկական ովկիանոսի հիւսիսային հատուածին մէջ:

## ՖԻՆԼԱՆՏԱ, ԹՈՒՐԵԿ ԵՒ ՆԱԹՕ

Ֆինլանտայի նախագահ Սուլի Նիկիլիսթո ակնկալեց, որ Անգարա աջակցի ՆԱԹՕ-ին Ֆինլանտայի անդամակցութեան: Նախագահը Թուրքիոյ մէջ տեսակցութիւններ կ'ու-




նենայ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի եւ այլ պատասխանատուներու հետ՝ քննարկելու համար երկկողմանի յարաբերութիւնները եւ ՆԱԹՕ-ին անդամակցելու դիմումը: Նշեց, որ Անգարա կը շարունակէ տատանուիլ Ֆինլանտայի եւ Շուէտի՝ ՆԱԹՕ-ին անդամակցութեան դիմումին հաւանութիւն տալ, անոնցմէ պահանջելով յաւելեալ պայքար քիւրտներուն դէմ:

## ԱՄԲԱՏԱՆՈՒԹԻՒՆ ՌԻԱՏ ՍԱԼԱՄԷԻ ՆԿԱՏԱՄԲ

(Շարունակուած Ա. Էջէն)

Իսկ երեսփոխան Մարուան Համատէ յայտնեց, որ Մարտա իսթանբուլ նախագահ Սլէյման Ֆրանսիէի նախագահական թեկնածութիւնը չի վայելէր Միացեալ Նահանգնէ-



րու եւ Մեծնական Արաբիոյ աջակցութիւնը: Համատէ կը տրականապէս մերժէր «Սուրիոյ նախագահ Պաշտայնի» եւ Թեհրանի Պապայայի պալաւի վերադարձը: Երեսփոխանին համաձայն, Մարտայի ղեկավարին նկատմամբ իրենց դիրքորոշումը անաչուած չէ անոր անձին, այլ՝ անոր թեկնածութիւնը առաջարկած կողմին հետ:



# ԱՐԱՐԱԴ ՕՒՍԱԿԱԿԱՆ

## ՉԵՍՓԻՆԸ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏ. ԴԱՐՁ ՍԻԹԻ ԵՒ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ ԱՆՅԱՆ ՅԱԶՈՐԴ ՓՈՒԼ

Երեքշաբթի երեկոյեան շարունակուեցան Եւրոպայի ֆուտբոլի ակումբներու առաջնակարգ մրցաշարի՝ ՉԵՍ-փինըզ Լիգի վերջին 16 խումբերու հանգրուանի դարձի մրցումները: Այս հանգրուանի 5-րդ մրցումին, Անգլիոյ ախոյեան «Մանչեսթըր Սիթի»-ն իր դաշտին վրայ մրցեցաւ Գերմանիոյ «Լայպցիգ»-ի դէմ: Երթի մրցումը աւարտած էր հաւասարութեամբ: Ուրեմն ամեն ինչ պիտի որոշ-



ւեր այս մրցումին: «Մանչեսթըր Սիթի» տիրապետեց մրցումին 67 ամ հարիւր համեմատութեամբ: Խումբը կրցաւ կատարել 16 դիպուկ ու 10 անկիւնային հարուած-մինչ «Լայպցիգ» կատարեց միայն մէկ դիպուկ հարուած: Նոր-վեկիացի յարձակող Էրլինգ Էսթրաստ օրուան աստղն էր: Ան, տուգանախիտով՝ 22-րդ, 24-րդ, 45+2-րդ, 53-րդ եւ 57-րդ վայրկեաններուն նշանակեց հինգ կոլ: Գերմանացի կիսապաշտպան Կիւստոֆ Գլազեր Սիթիի յարձակումը կիսապաշտպան Տէ Պոլոն՝ 90+2-րդ վայրկեաններուն ամողջացուցին «Մանչեսթըր Սիթի» յաղթանակը, Կրիլիշի եւ փոխարինող ալքերիացի յարձակող Մահրէզի փոխանցումներով: «Մանչեսթըր Սիթի» յաղթեց եւ անցաւ քառորդ աւարտական հանգրուան: Օրուան երկրորդ մրցումին, Փորթուկալի «Փորթո»-ն իր դաշտին վրայ ընդունեց Դէն-Ռիի Միլիթայթի մաս կազմած Իտալիոյ «Ինթեր Միլան»-ը: Երթի մրցումին, «Ինթեր Միլան» յաղթեց եր միակ կոլով: Ուրեմն, «Փորթո» պէտք է յաղթեր երկու կոլի տարբերութեամբ: Թէեւ «Փորթո» ուներ առաւելութիւն, որ հասաւ 68 ամ հարիւրի եւ խումբը կատարեց 7 դիպուկ ու 6 անկիւնային հարուած, սակայն «Ինթեր Միլան»-ի պաշտպանութեան օղակը գործեց անվրէպ եւ չէզոքացուց բոլոր յարձակումները: Խումբը իր կարգին կատարեց 5 դիպուկ ու 3 անկիւնային հարուած: Միլիթայթեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին: Մրցումը աւարտեցաւ առանց կոլերու հաւասարութեամբ եւ «Ինթեր Միլան» անցաւ քառորդ աւարտական հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Մանչեսթըր Սիթի (Անգ.) - ՌԴ Լայպցիգ (Գեր.) 7-0, երթ. 1-1
- Փորթո (Փոր.) - Ինթեր Միլան (Իտ.) 0-0, երթ. 0-1

## ԱՄՈՑ ՄԻՆՉԵՒ 20 ՏԱՐԵԿԱՆ 1/4-ՐԴ ՄԱՐՏ. ԻՐԱԲ ԵՒ ԻՇՊԵՔԻՍԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Իզապէխիստանի ֆուտբոլի մարզադաշտերուն վրայ շարունակուեցան Ասիոյ մինչեւ 20 տարեկան տղոց ֆուտբոլի ախոյեանութեան մրցումները: Զառնորդ աւարտա-



կան հանգրուանին, Իրաք անակնկալ արդիւնք մը արձանագրեց, երբ դուրս ձգեց Իրանի հաւաքականը: Մրցումին միակ կոլը նշանակեց կիսապաշտպան Ալի Ժասիմ, 90+1-րդ վայրկեանին: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Իրան - Իրաք 0-1
- Իզապէխիստան - Աւստրալիա 1-1 տուգ. 5-4
- Դար.Զորեա - Չինաստան 2-1
- Ճափոն - Յորդանան 2-0

Կիսաւարտական հանգրուանին պիտի մրցին հետեւեալ խումբերը.

- Իրաք - Ճափոն եւ Իզապէխիստան - Դար.Զորեա

## ԼԵՅԱՍԱՆԻ ԱՆՈՑԵԱՆՈՒԹԵԱՆ 24-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՓՈԿՈՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Լեհաստանի ֆուտբոլի ախոյեանութեան 24-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Վահան Քիչախչեանի մաս կազմած 4-րդ դիրքը գրաւող Շեցիկ Եսիսեան «Փոկոն»-ը իր դաշտին դուրս միակ կոլով յաղթեց 12-րդ դիրքը գրաւող Լուպինի «Չակլիտի»-ին: Քիչախչեան հիմնական կազմին մէջն էր եւ փոխարինուեցաւ 64-րդ վայրկեանին: «Փոկոն» 39 կետով 4-րդ է: Իսկ առաջատարն է «Ռաքով Չեսլոխովա»-ն 58 կետով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Չակլիտի Լուպին - Փոկոն Շեցիկ 0-1

## ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՑԵԱՆՈՒԹԵԱՆ 27-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՄԱՐՍԵՅ ԿԵՏ ԿՈՐՆՆՅՈՒՑ

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 27-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 3-րդ դիրքը գրաւող «Մոնաքո» իր դաշտին վրայ զիջեցաւ 8-րդ դիրքը գրաւող «Ռեն»-ին եւ նահանջեց 4-րդ դիրքը: Երկրորդ դիրքը գրաւող «Օլիմ-



պիլը Մարսել» իր դաշտին վրայ հաւասարեցաւ 15-րդ դիրքը գրաւող «Սթրասպուր»-ի հետ: Իսկ առաջատար «Փարի Սէն Շերմէն» իր դաշտին դուրս յաղթեց 16-րդ դիրքը գրաւող «Պրետս»-ին: Սպանացի կիսապաշտպան Զարոս Սուլար 37-րդ վայրկեանին յառաջ տարաւ «Փարի Սէն Շերմէն»-ը: 43-րդ վայրկեանին, կիսապաշտպան Օնորա հաշիւը դարձուց 1-1, կիսապաշտպան Տէլ Զասթիոյի փոխանցումով: Սակայն, յարձակող Մպալիթ 90-րդ վայրկեանին հաշիւը դարձուց 1-2, Մեսսիի փոխանցումով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Պրետս - Փարի Սէն Շերմէն 1-2
- Օլիմպիք Մարսել - Սթրասպուր 2-2
- Մոնաքո - Ռեն 0-1, - Զլէմբոն - Լանս 0-4
- Լիլ - Օլիմպիք Լիոն 3-3, - Օքսեր - Ռեն 0-0
- Նանթ - Նիս 2-2

Դասաւորում.1)Փարի Սէն Շերմէն 66 կետ 68-26, 2) Մարսել 56 կետ 51-27, 3) Լանս 54 կետ 44-21, 4) Մոնաքո 51 կետ 55-37, 5) Ռեն 47 կետ 45-29:

## ՌՈՍԻՆՈՑ ԱՆՈՑԵԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՍՓԵՐՑԵԱՆԻ ՄԵՎ ՓՈՆԱՆՑՈՒՄ

Ռոսիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 19-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, հայաստանի հաւաքականի յարձակող Ետուարտ Սփերցեանի մաս կազմած 8-րդ դիրքը գրաւող «Զրասնատար» իր դաշտին վրայ մրցեցաւ 4-րդ դիրքը գրաւող «Տիւսում Մոսկուա»-ի դէմ ու յաղթանակ տարաւ: Մրցումի 19-րդ վայրկեանին, յարձակող Թիլմաչի յառաջ տարաւ «Տիւսում»-ը, քամերուցի կիսապաշտպան Մուսի Նկամեյոյի փոխանցումով, որ 58-րդ վայրկեանին կարմիր քարտ ստացաւ: Սակայն, պրազիլցի պաշտպան Զատի՝ 24-րդ, 67-րդ եւ փոխարինող կիսապաշտպան Բրիլիցով՝ 90+3-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 3-1, եզուատորցի պաշտպան Ռամիլիւթի եւ Սփերցեանի փոխանցումներով: Իսկ կիսապաշտպան Խորէն Պալարմեանի մաս կազմած 3-րդ դիրքը գրաւող «Ռոսթով»-ը իր դաշտին վրայ յաղթեց 13-րդ դիրքը գրաւող «Նիժնի Նովկորոտ»-ին: Պալարմեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Չենիթ Ս.Փեթեր - Կիմքի Մոսկուա 3-2
  - Սպարտակ Մոսկուա - Ֆաքէլ Վորոնեժ 3-2
  - Ռոսթով - Նիժնի Նովկորոտ 2-1
  - Զասնատար - Տիւսում Մոսկուա 3-1
  - ԲԿՍՄ Մոսկու - Կրիլիա Սովետով Սամարա 4-0
- Դասաւորում.1)Չենիթ 48 կետ 53-9, 2) Սպարտակ 40 կետ 45-22, 3) Ռոսթով 38 կետ 35-27, 4) Տիւսում Ս. 32 կետ 35-24, 7) Զրասնատար 29 կետ 36-32:

## ԱՄԻ ԱՆՈՑԵԱՆՈՒԹԵԱՆ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՉԵԼՍԻՍԵԱՆԻ ԵՐԿՈՒ ԿՈՒՆԵՐ

ԱՄԻ-ի ֆուտբոլի ախոյեանութեան 2-րդ հանգրուանի մրցումներուն, Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Լուքսա Չելարայեանի մաս կազմած «Քոլումպոս Զրու»-ն իր դաշտին վրայ մրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող «Տի.Սի.Եունայթըտ»-ի դէմ ու արձանագրեց իր առաջին յաղթանակը շնորհիւ Չելարայեանի նշանակած երկու կոլերուն: Չելարայեան 10-րդ եւ 44-րդ վայրկեաններուն նշանակեց խումբին կոլերը, գոլումպիացի յարձակող Դերմանեզի եւ ռումանացի կիսապաշտպան Պաթիանիի փոխանցումներով: Այս արդիւնքով, խումբը գրաւեց Արեւելեան շրջանի 9-րդ դիրքը: Իսկ 3-րդ հանգրուանին, «Քոլումպոս Զրու» իր դաշտին դուրս հաւասարեցաւ 11-րդ դիրքը գրաւող «Թորոնթո»-ի հետ ու 4 կետով գրաւեց 8-րդ դիրքը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Զոլումպոս Զրու - Տի.Սի.Եունայթըտ 2-0
- Իսկ 3-րդ հանգրուանին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.
- Թորոնթո - Զոլումպոս Զրու 1-1

## ԱՐԺԱՆԹԻՆԻ ԲԱԺԱԿԻ 1/32-ՐԴ ՄԱՐՏ. ԹԻԿՐԵ ԵՒ ԺԻՄՆԱԶԻԱ ԴՈՒՐՍ ՄԱՑԻՆ

Շաբթուան ընթացքին տեղի ունեցան Արժանթինի ֆուտբոլի բաժակի վերջին 64 խումբերու հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի անկնկալն էր Ա.դասակարգի «Թիկրե»-ի պարտութիւնը իր դաշտին վրայ Ե.դասակարգի «Սանթո Եսփանիոլ»-էն տուգանային հարուածներով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Եսթիտիանս (Ա.) - Ինտիմ.Չիլիլիքոյ (Գ.) 3-0
- Թիկրե (Ա.) - Սանթո Եսփանիոլ (Ե.) 1-1 տուգ. 4-5
- Ռիվըր Փլեյթ (Ա.) - Ռասիլի Զորտոպա (Բ.) 3-0
- Ժիմնազիա Լա Փլաթա (Ա.) - Էքսքրիպիոնիսթաս (Գ.) 1-1 տուգ. 5-6
- Նիլու Օլո Պոյո (Ա.) - Զլէյիլ (Գ.) 0-1

## ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԻՐՈՒՄ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏ. ԴԱՐՁ**  
19:45 Ֆրայպուրկ (31) - Եուվէթիս (20)  
19:45 Ֆեներպահչէ (57) - Սեւիյա (67)  
19:45 Ռէալ Պեթիս (24) - Մանչեսթըր Եուն. (14)  
19:45 Ֆէյենուրտ Ռոթթըր. (34) - Շախտիոր Տոնէցց (40)  
22:00 Ինթոն ՍԷՆ Կիլուազ (102) - Ինթոն Պերլին (23)  
22:00 Ֆերենցվարոշ (97) - Պայէր Լէվերքուզըն (43)  
22:00 Արսենալ (6) - Սիլիքոնս Լիզպոն (27)  
22:00 Ռէալ Սոսիետատ (26) - Ռոմա (21)

- ԻՐՈՒՄ ԶՈՆՃԵՐԸՆԸ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏ. ԴԱՐՁ**  
19:45 Սիվասսփոր (287) - Ֆիրոնթիս (66)  
19:45 Տիւրքարսըն (151) - Լէի Փուզան (201)  
19:45 Սիւլվան Պաթիպալա (103) - Պազըլ (157)  
22:00 Ուեսթ Դէմ Եուն. (92) - ԱԷԲ Լաունսքա (124)  
22:00 ԱՉ Ալքամար (54) - Լաքի Ռոմա (21)  
22:00 Նիս (50) - Շերիֆ Թիրասիուլ (63)  
22:00 Վիլարեալ (41) - Աստորիլիսթ (185)

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՑԵԱՆՈՒԹԵԱՆ 24-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
13:00 Լեռնային Արցախ Գորիս (8) - Փիւնիկ (3)  
16:00 ԲԿՍՄ (9) - Ուրարտու (1)

- ՊԱԷԹՊՈՒԼ ԵՆ. ՊԻ.ԷՅ. Ի ԱՆՈՑԵԱՆՈՒԹԻՆ**  
01:30 Պրուլին Նեց (6) - Սաքրամենթո Զիւնկ (3)  
04:00 Ֆիւնիքս Սանզ (4) - Օլիւստա Մեծիք (13)

- ՊԱԷԹՊՈՒԼ ԵՆ. ԹԻ.ԷՅ. Ի 29-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
19:30 Աստորու Էֆէս (10) - Փարթիզան Պելկրատ (7)  
20:00 Ժալկիրիս Զաունաս (9) - Օլիմպիաքոս Փիրեոս (1)  
20:00 ԱՍ Մոնաքո (4) - Վիլիս Գոլոնիա (11)  
21:05 Մաքալի ԹԱ (8) - Պաքոնիս Վիլորիա (6)  
21:30 Վալենտիա Պաքթի (12) - Ֆեներպահչէ (5)  
21:45 Արսենալ (2) - Արմանի Միլան (13)

- ԹԵՆԻՍԻ ԻՆՏԵՐՆ ՌԵԼՈՒ ՄԱՍՁՐՈՂԻ ԿԻՍԱՄԱՐՏ.**  
01:00-Էն սկսեալ, «beinsports» կայանէն  
**ԶՆՆՆԱՅԻՆ ՄԱՐՁԱԶԵՆԵՐ**  
16:30 Պիաթոնի Դուվերլընի մրցում, «eurosport»-էն  
17:30 Դաիոկով գատիկ Լիլլիհամըրի մրցում, «eurosport»

## ՊԱԷԹՊՈՒԼ ԼԻԲԱՆՆԻ 18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՏԻՆԱՍՕ ԵՒ ՊԵՅՐՈՒԹ ՅԱՂԹԱԿԱՆ

Շաբթուան ընթացքին տեղի ունեցան Լիբանանի պատեթբոլի ախոյեանութեան 18-րդ հանգրուանի մրցումները: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.



- Զիքմէ - Աթլաս Ֆրոզով 109-89
- Ռիատի Պէրուս - Պիպլոս Շպէլ 124-87
- Պէրուս Զլապ - Շաւվիլ 108-74
- Դ.Ս.Շ.Ս. - Ն.Ս.Ա. Անթիլիաս 90-85
- Դուսիս - Տիւսում Զլապ 72-80
- Պիպլոս Շպէլ - Լիտորոզ 83-96

Դասաւորում.1)Տիւսում 18 յաղթ - 1 պարտ / կետերու տարբ. +429, 2) Պէրուս Զլապ 17-2 / +378, 3)Զիքմէ 16-2 / +458, 4) Ռիատի 15-3 / +363, 9) Անթիլի 7-11 / -223, 10) Դ.Ս.Շ.Ս. 5-14 / -310:

## ԱՐՄԷՆ ԴՈՒՎԵՐԸՆԵՆ ՈՒ ԶԷՅՆԱԿ ՄԻՆԸՆ ԴԻՏՊՐԿԸՆ ԵՆ ՉՐԸՆ-ԲՈՇՈՒՄ ԽՂԿԵՐԸ...

(Շարունակուած Բ. Էջէն)

պատասխանատուութեամբ կը մօտենայ միջազգային կարեւոր իրադարձութեան: Ան ընդգծած է միջոցառման՝ ինչպէս մարզական ու մշակութային բաղադրիչներու կազմման, այնպէս ալ մասնակիցներու եւ հիւրերու կեցութեան համար անհրաժեշտ շինութիւններու ճշդ ընտրութեան եւ բոլոր յարմարութիւններու ստեղծման կարեւորութիւնը:

Քննարկուած են նաեւ յոբելեանական խաղերու կայացման հնարաւոր վայրերու օրինակներ: Կարեւորուած է վերջին տարիներուն միջազգային մեծ մարզական միջոցառումներ կայացնելու Հայաստանի փորձը:

Չէլսա Միւսան Նշած է, որ այցի ընթացքին անձամբ համոզուած է, որ Հայաստանը ունի մարզական եւ մշակութային բարձրակարգ ենթակառուցումներ: Ան վստահեցուցած է, որ ֆրանսերէնի խաղերու միջազգային կոմիտէի փորձագետներու խմբակը պատրաստ է աջակցելու Հայաստանին կարեւոր միջոցառման նախապատրաստման ընթացքին:

Կողմերը հանդիպումը գնահատած են արդիւնաւետ եւ անհրաժեշտ՝ Հայաստանի հնարաւորութիւններն ու ընելիքները յստակացնելու տեսանկիւնէն:

**ARARAD DAILY NEWSPAPER**  
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN  
Tel.-Fax: 01-565599 / P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut / Lebanon / www.araraddaily.com  
email: araradoratert@gmail.com  
**ارارات** جريدة سياسية يومية أرمنية | المحبرة المسؤولة: أني صارافيان  
تصدر عن شركة مسيسر للمطبعة والنشر (ش.م.م.)